ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

BADASYAN CONSULTING

ԱՊՐԻԼ 2026

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-134-Ն (ընդունված՝ 07.04.2026թ., ուժի մեջ՝ 28.04.2026թ.)

- «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում ավելացվում է «սինթետիկ բովանդակություն» հասկացությունը՝ տեսալսողական, ձայնային կամ այլ տեղեկատվական նյութ կամ պատկեր, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն ստեղծվել կամ ձևափոխվել է գեներատիվ արհեստական բանականության (ԱԲ), մեքենայական ուսուցման կամ թվային այլ տեխնոլոգիաների կիրառմամբ և կարող է սպառողի մոտ ստեղծել ակնհայտորեն իրականության անհամապատասխանության ընկալում կամ մոլորություն դրա ծագման, իսկության կամ դրանում ներկայացված անձի խոսքի, պատկերի, գործողությունների կամ երևույթների վերաբերյալ: Կարգավորումը վերաբերում է AI-ի կամ այլ թվային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված կամ փոփոխված նյութերին (deepfake, AI-generated content և այլն):
- Տեսալսողական մեդիածառայություն մատուցողները պարտավոր են ապահովել հեռարձակվող տեսալսողական նյութերում սինթետիկ բովանդակության հստակ, լսելի կամ տեսանելի և ընթեռնելի մակնշումը՝

1. գեներատիվ արհեստական բանականության կամ մեքենայական ուսուցման վրա հիմնված այլ տեխնոլոգիաների կիրառմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն ստեղծված կամ ձևափոխված սինթետիկ բովանդակության դեպքում՝ «Ստեղծված է ԱԲ-ի կողմից» նշումով.
2. թվային այլ տեխնոլոգիաների կիրառմամբ ամբողջությամբ կամ մասնակիորեն ձևափոխված սինթետիկ բովանդակության դեպքում՝ «Ենթարկվել է թվային մշակումների» նշումով:

- Նշված պահանջները խախտելու համար սահմանվել է տուգանք՝ 300,0 հազ. դրամի չափով:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-95-Ն (ընդունված՝ 07.04.2026թ., ուժի մեջ՝ 07.04.2026թ.)

- Փոփոխությամբ խստացվում և հստակեցվում են քվեաթերթիկների ու քվեարկության ծրարների հաշվարկման կանոնները: Սահմանվում է, որ եթե ծրարում կա որևէ գրառում, նշում կամ սահմանված նմուշի քվեաթերթիկից բացի այլ իր (օրինակ՝ այլ թուղթ կամ չսահմանված քվեաթերթիկ), ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:
- Բացի այդ, սահմանափակումներ են դրվում կուսակցությունների դաշինքների անվանումների վրա:

«Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-140-Ն (ընդունված՝ 07.04.2026թ., ուժի մեջ՝ 29.04.2026թ.)

- Փոփոխությունները հիմնականում վերաբերում են ջերմոցների (ջերմատների) և գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանների շինարարության թույլտվության տրամադրման տեղական տուրքերի առանձնացմանն ու վերահաշվարկմանը: Ջերմոցներն ու գյուղատնտեսական նպատակներով կառուցվող ջրավազանները տեղական տուրքի դրույքաչափերի առումով առանձնացվել են շինությունների մյուս տեսակներից: Դրանց շինարարության համար տուրքի չափը սահմանվել է 400 հազ. դրամ՝ 1 հեկտար ընդհանուր մակերեսի հաշվով: Եթե կառուցվող մակերեսը 1 հեկտարից տարբերվում է, ապա տուրքի գումարը հաշվարկվում է համամասնորեն՝ հիմք ընդունելով 1 հեկտարի դիմաց 400 հազար դրամը: Ինչպես մյուս շինությունների դեպքում, կիրառվում է նաև շինության կառուցման վայրի տարածագնահատման (գոտիականության) գործակցով (1-ից մինչև 5, ըստ գոտիների): Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026թ. ապրիլի 29-ից և կիրառվում են միայն այն դիմումների վրա, որոնք տեղական ինքնակառավարման մարմին կներկայացվեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՕ-135-Ն, «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-136-Ն և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-137-Ն (ընդունված՝ 07.04.2026թ., ուժի մեջ՝ 08.05.2026թ.)

- «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում կատարվել են մի շարք էական փոփոխություններ և լրացումներ, որոնք վերաբերում են շահառուների խմբերին, վճարումների համակարգին, պացիենտների իրավունքներին և Հիմնադրամի գործունեությանը:
- Օրենքի պահանջները չէին տարածվում փախստականների, ապաստան հայցողների և նրանց ընտանիքի անդամների վրա, որոնք արդեն փոփոխությամբ դառնում են ապահովագրության ենթակա, եթե ընդգրկված են հանտնդհանուր ապահովագրության ենթակա որոշ խմբերում: Մնացած դեպքերում նրանք օտգվում են լրացուցիչ ծառայություններից՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքին համապատասխան:
- Վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին կամ ռոյալթի ստացող ֆիզիկական անձինք համարվելու էին ապահովագրության ենթակա անձ՝ անկախ ստացվող եկամտի չափից: Սահմանվել է շեմ՝ այս անձինք համարվելու են ապահովագրված անձ այն դեպքում, եթե նշված եկամուտների հանրագումարը տարեկան կազմում է 2,400,000 դրամ և ավելի:
- Գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներից բացի առողջության համընդհանուր ապահովագրության պահանջը տարածվելու է նաև մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց (վարորդների) վրա, որոնք միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին և ամեն պատվերի իրականացման դեպքում տրամադրում են պատվիրատուին պատվերի վճարման էլեկտրոնային ՀԴՄ կտրոն, կամ որոնք ուղևորափոխադրումներն իրականացնում են ուղևորափոխադրման ծառայության էլ. հարթակի միջոցով:
- Վարորդների համար ապահովագրությունը լինելու է պարտադիր, և նրանք պետք է ինքնուրույն վճարեն ամսական 10,800 դրամ ապահովագրավճար: Ապահովագրված համարվելու և բժշկական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է դիմում ներկայացնել Հիմնադրամին և կատարել վճարումը: Միաժամանակ, եթե վարորդը նաև վարձու աշխատող է կամ պատկանում է պետության կողմից ապահովագրվող խմբերից մեկին, կիրառվելու են առավել բարենպաստ պայմանները:
- Վարորդների մասով ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով առաջացած վնասների հատուցումը շարունակելու է իրականացվել ԱՊՊԱ համակարգով, ոչ թե առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի միջոցով:
- Հստակեցվել է, որ եթե ապահովագրավճարն ինքնուրույն վճարող անձը 3 ամիս անընդմեջ չի վճարում գումարը, պարտավորությունների մասին ծանուցվելուց հետո մեկամսյա ժամկետում Հիմնադրամն իրավունք ունի դիմելու դատարան՝ բռնագանձման հայցով:
- Վարորդների մասով փոփոխությունները, հիմք ընդունելով հիմնական օրենքի անցումային դրույթները, գործելու են 2028 թվականի հունվարի 1-ից:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՕ-143-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 06.05.2026թ.)

- 2019թ. դեկտեմբերի 9-ին ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-258-Ն օրենքի ընդունմամբ օրենքի 29-րդ հոդվածում կատարվեց լրացում, համաձայն որի՝ օդային տրանսպորտով մեկնող այն ֆիզիկական անձինք, որոնք առևտային ավիափոխադրումներ իրականացնող ավիաընկերությունների միջոցով մեկնում են առաջին թռիչքի մեկնարկի պահին նախորդող վերջին 12 ամիսներին չսպասարկված IATA կոդով օդանավակայաններ օգտվում են օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով սահմանված օդային ուղեւորների ելքի համար սահմանված պետական տուրքի վճարումից ազատվելու արտոնությունից: Այս փոփոխությամբ սահմանվում է, որ օդային տրանսպորտով մեկնող ֆիզիկական անձանց համար նախատեսված պետական տուրքի վճարման արտոնությունից օգտվում են նաև այն անձինք, որոնք մեկնում են ԵՄ թռիչքային անվտանգության ցանկում (սև ցուցակ) ընդգրկված լինելու հետևանքով իրենց կոդով թռիչքներ չիրականացրած ավիաընկերությունների միջոցով: Նշված արտոնությունը գործում է, եթե ավիաընկերությունն իր թռիչքները կազմակերպել և իրականացրել է թաց-լիզինգով (Wet Lease) շահագործվող օդանավերի միջոցով դեպի այն օդանավակայանները, որոնք չվերթերը մեկնարկելու օրվա դրությամբ համարվել են չսպասարկված: Թաց-լիզինգով (Wet Lease) շահագործվող օդանավերով իրականացված թռիչքների մասով պետական տուրքի վճարումից ազատվելու իրավունքը գործելու է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ պահպանելով արտոնության ընդհանուր ժամկետները:
- Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ օրենքի գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-144-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 15.05.2026թ.)

- «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվում են մշակութային արժեքների արտահանման գործընթացում պետական տուրքի նոր տեսակներ, տարանջատվում են մաքսային մարմինների կողմից մշակութային արժեքների համար գանձվող պետական տուրքերը: Մշակութային արժեքների և հանքագիտության ու հնէաբանության հավաքածուների արտահանման, ժամանակավոր արտահանման, ինչպես նաև մաքսային տարածքից դուրս վերամշակման նպատակով արտահանման թույլատրող փաստաթղթերի տրամադրման համար պետական տուրքը սահմանվում է հետևյալ չափերով՝ մեկ մշակութային արժեքի դեպքում՝ 10.0 հազ. դրամի չափով, իսկ երկու և ավելի մշակութային արժեքների դեպքում՝ 15.0 հազ. դրամի չափով: Նշված թույլատրող փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար պետական տուրքը սահմանվում է 3.0 հազ. դրամի չափով: Պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում համապատասխան ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված լրացուցիչ ծախսերը: Միաժամանակ, հստակեցվել են նաև մշակութային արժեքների արտահանման գործընթացում պետական տուրքի գծով արտոնությունները:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՕ-133-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 28.04.2026թ.)

- «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում կատարված փոփոխություններով՝
- Հստակեցվել է «տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր» հասկացությունը: Դիստրիբյուտորը օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, որը գործում է գույքային իրավունքները տիրապետող անձի հետ ձեռք բերված գրավոր համաձայնության հիման վրա:
- Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքները վերախմբագրվել են, սահմանելով նոր արգելքներ, այդ թվում՝ տեսալսողական հաղորդումը կամ ծրագիրը տարածելն առանց դրա գույքային իրավունքները տիրապետող անձի համաձայնության: Արգելքների չափորոշիչները սահմանելու է կարգավորող պետական մարմինը:
- Ցանցային օպերատորների համար սահմանվել են նոր պարտականություններ՝ օտարերկրյա տեսալսողական ծրագիրը կարող է վերահաղորդվել միայն գույքային իրավունքի տիրապետողի հետ գրավոր համաձայնության դեպքում և կարգավորող մարմնին ծանուցելուց հետո:
- Օպերատորը պարտավոր է կարգավորող մարմնի կողմից տեղեկացվելուց հետո 24 ժամվա ընթացքում դադարեցնել ծրագրի վերահաղորդումը, եթե հարուցվել է վարչական վարույթ՝ չարաշահումների հայտնաբերման հիմքով:
- Սահմանվում են իրավախախտումների համար կիրառվող տուգանքների չափերը՝ առանց գրավոր համաձայնության վերահաղորդում իրականացնելու համար ցանցային օպերատորի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ մեկ ծրագրի դեպքում 50,0 հազ, դրամի չափով, իսկ տասից ավելի ծրագրերի դեպքում՝ 500,0 հազ. դրամի չափով: Տեղեկացվելուց հետո ծրագրի վերահաղորդումը չդադարեցնելու համար նախատեսվում է տուգանք 500,0 հազ. դրամի չափով:
- Օրենքը լրացվել է նոր հոդվածով, որով սահմանվել են ցանցային օպերատորի լիցենզիան մինչև 30 օրով կասեցնելու (մասնավորապես՝ 1 տարում 3 անգամ տույժի ենթարկվելու, 72 ժամ անհիմն վերահաղորդում չիրականացնելու դեպքում) և լիցենզիայի գործողությունը ամբողջությամբ դադարեցնելու հիմքերը:
- Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, կարգավորող մարմինը պետք է ընդունի պահանջվող չափորոշիչները: Չափորոշիչների ուժի մեջ մտնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, դիստրիբյուտորներն ու օպերատորները պարտավոր են իրենց գործունեությունը համապատասխանեցնել օրենսդրության պահանջներին:

«Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՕ-145-Ն, «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՕ-146-Ն և «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-147-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 15.05.2026թ.)

- Փոփոխությունների նպատակն է հստակեցնել հարկային և մաքսային ծառայության պաշտոնների նշանակման գործընթացը, բարձրացնել ծառայողների պատրաստվածության ու բարեվարքության մակարդակը: Պարզեցվում են նշանակման պայմանները, պաշտոնները հստակ դասակարգվում են ըստ խմբերի, սահմանվում են նոր տարիքային և պատրաստման կարգավորումներ: Օրենքերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ պատրաստման գործող հավաստագիր չունենալու հիմքով պաշտոնից ազատման կարգավորման, որն ուժի մեջ է մտնում օրենքն ուժի մեջ մտնելուց երկու օրացուցային տարի հետո:

«Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի լրացումը վավերացնելու մասին ՀՕ-141-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 29.04.2026թ.)

- ՀՀ-ն, ՏՀԶԿ կողմից մշակված Միասնական հաշվետվողական ստանդարտի ներդրման շրջանակներում, դեռևս 2023 թվականին վավերացրել էր ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման իրավասու մարմինների միջև բազմակողմ համաձայնագիրը: ՀՕ-141-Ն օրենքով վավերացվել է համաձայնագրի լրացումը, որի նպատակն է բարձրացնել ֆինանսական տեղեկությունների ավտոմատ փոխանակման արդյունավետությունը՝ ընդլայնելով փոխանակվող տեղեկությունների շրջանակը և ապահովելով դրանց ճշգրտությունն ու վերահսկողությունը:
- Մասնավորապես, պահանջվելու է փոխանակել մանրամասն տվյալներ ներկայացված ինքնահայտարարագրերի, ֆինանսական հաշիվների հատուկ տեսակների և դրանց ընթացիկ կարգավիճակի բնութագրիչների վերաբերյալ: Կարևորվում է նաև իրավաբանական անձանց վերահսկող անձանց դերի հստակեցումն ու նրանց առավել խորքային նույնականացումը, ներդրումային ընկերություններում մասնակցության ձևերի վերաբերյալ տվյալների փոխանցումը:
- Ստանդարտը ներդրած երկրներին մինչև 2027թ. տրամադրվել է անցումային ժամանակահատված լրացման վավերացման և ներպետական օրենսդրության համապատասխանեցման համար: Համաձայնագրի լրացմանը միանալը հնարավորություն կտա լիարժեք մասնակցել գործընկեր երկրների հետ ամբողջական և արդիական տեղեկությունների փոխանակմանը՝ նպաստելով հարկային թափանցիկության բարձրացմանը և հարկերից խուսափման ռիսկերի նվազեցմանը:

«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-138-Ն և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-139-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 01.05.2026թ.)

- Սահմանվել է, որ Սահմանադրական դատարանի նախագահին, փոխնախագահին և դատավորին տրվում է աշխատանքային ստաժի համար հավելավճարներ, որոնց հաշվարկման համար սահմանվում են դրույքաչափեր ըստ պաշտոնավարման տարիների: Անցումային դրույթներով սահմանվում է, որ նշված հավելավճարի հաշվարկման համար հիմք են ընդունվում օրենքն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում աշխատած լրիվ տարիները:

«Էկոպարեկային ծառայության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին ՀՕ-142-Ն (ընդունված՝ 16.04.2026թ., ուժի մեջ՝ 06.05.2026թ.)

- «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով լրացվում են Կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի ղեկավարի իրավասությունները պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացման գործընթացներին էկոպարեկային ծառայողի մասնակցության կարգի սահմանման առումով: Ծառայողն իրավունք է ստանում նախատեսված կարգով և իր իրավասության սահմաններում մասնակցել կենսաբազմազանության մոնիթորինգի գործընթացներին: Բացի այդ, պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ապահովման շրջանակներում տեղեկատվության օպերատիվ ձեռքբերման և փոխանակման նպատակով ծառայողին իրավունք է վերապահվում համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8545 11 002 0 ծածկագրին դասվող՝ վառարաններում օգտագործվող գրաֆիտացված էլեկտրոդների՝ առանց հակագնագցման տուրքի վճարման Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին (N 426–Ն, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- ԵՏՀ կոլեգիայի 2025 թվականի նոյեմբերի 17-ի N101 որոշմամբ սահմանվել է հակագնագցման տուրք ԵԱՏՄ տարածք ներմուծվող՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ծագում ունեցող և ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8545 11 002 0 ծածկագրին դասվող 520 մմ-ից ավելի, բայց ոչ ավելի, քան 650 մմ տրամագծով շրջանաձև լայնական հատույթով կամ այլ լայնական հատույթով 2700 սմ2-ից ավելի, բայց ոչ ավելի, քան 3300 սմ2 մակերեսով վառարաններում օգտագործվող գրաֆիտացված էլեկտրոդների նկատմամբ: Վերոնշյալ հակագնագցման տուրքը գործելու է 5 տարի ժամկետով: Նշված որոշման մեջ փոփոխություններով Հայաստանի համար սահմանվել է հակագնագցման տուրքի վճարումից ազատում ՀՀ տարածք ներմուծվող ապրանքի տարեկան 700 տոննա ծավալի համար: Հակագնագցման տուրքից ազատումը տրամադրվելու է տնտեսվարող սուբյեկտներին Կառավարության 10.03.2015թ. N228-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված ՀՀ տարածք ներմուծվող առանձին ապրանքների նպատակային նշանակությունը հաստատող եզրակացությունը ներկայացնելու դեպքում: Որոշմամբ նախատեսված է նաև, որ հակագնագցման տուրքը չի գանձվում նաև Liaoning Dantan New Materials Co., Ltd.-ի կողմից արտադրված վառարաններում օգտագործվող գրաֆիտային էլեկտրոդների նկատմամբ, եթե հայտատուն ապրանքների մասին հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ ունի համապատասխան արտադրողի լիազորված աշխատակցի կողմից ստորագրված և այդ արտադրողի կնիքով հաստատված՝ արտադրողի հավաստագիր՝ համաձայն Որոշման 11-րդ հավելվածով հաստատված ձևի, և ապրանքների հայտարարագրում ներկայացնում է այդպիսի հավաստագրի մասին տեղեկություններ:
- Ներկայացված որոշմամբ նախատեսվում է ազատում հակագնագցման տուրքի վճարումից՝ տարեկան 700 տոննա ծավալով 2026 թվականի հունվարի 18-ից մինչև 2031 թվականի հունվարի 18-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1283-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (N 412–Ն, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- Այսուհետ ՔԿԱԳ աշխատակցի փոխադրման ծախսերը հոգալու բեռը հանվում է քաղաքացիների վրայից: Այդ ծախսերը կիրականացվեն պետական բյուջեի միջոցներով, ինչը նպատակ ունի բացառել հնարավոր չարաշահումներն ու կոռուպցիոն ռիսկերը, որպեսզի աշխատակիցը զույգից որևէ լրացուցիչ ֆինանսական ակնկալիք չունենա: Որպեսզի պետական բյուջեի վրա լրացուցիչ ծանրաբեռնվածություն չառաջանա, նախատեսվում է բարձրացնել հանդիսավոր գրանցման համար սահմանված պետական տուրքի չափը, ինչն ամբողջությամբ կփոխհատուցի առաջացող ծախսերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (N 443–Ն, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 16.04.2026թ.)

- Նախկինում միայն պետական գույքի համար գործող էլեկտրոնային հարթակն այսուհետ կիրառվելու է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման համար,: Կարևոր է նշել, որ կարգավորումները տարածվում են ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքի վրա, սակայն սահմանվել է հստակ բացառություն. հողամասերի վարձակալության իրավունքը չի տրամադրվելու այս աճուրդով, քանի որ դրա համար օրենսդրությամբ նախատեսված է մրցութային այլ ընթացակարգ: Բացի այդ, աճուրդների պատասխանատու անձինք կարող են հանդիսանալ ինչպես Պետական գույքի կառավարման կոմիտեի, այնպես էլ համապատասխան համայնքի աշխատակիցները:
- Փոփոխություններով վերանայվել են լոտերի մեկնարկային գների որոշման սկզբունքները. մասնավորապես, կադաստրային արժեքի փոխարեն հիմք է ընդունվելու գնահատված շուկայական արժեքը: Սահմանվել են նաև նախավճարների և նվազագույն հավելման չափերի նոր սանդղակներ՝ կախված գույքի արժեքից, ինչը թույլ կտա առավել ճկուն կառավարել աճուրդային պրոցեսը: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումները պետք է հրապարակվեն համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ բուն աճուրդը կարող է կայանալ ծանուցումից 15 կամ 45 օր հետո՝ կախված գույքի տեսակից:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 439–Ն, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 13.04.2026թ.)

- Առանցքային փոփոխությունը պետական և համայնքային հողամասերի օտարման անցումն է բացառապես էլեկտրոնային աճուրդների համակարգին, ինչը վերաբերում է նաև տնամերձ և բնակելի տան կառուցման ու սպասարկման համար նախատեսված հողերին: Այս մոտեցումը նպատակ ունի նվազեցնել մարդկային գործոնի ազդեցությունը, ապահովել գործընթացի թափանցիկությունը և ստեղծել մրցակցային հավասար պայմաններ բոլոր մասնակիցների համար:
- Որոշմամբ սահմանվում է, որ էլեկտրոնային աճուրդով վաճառքի մեկնարկային գինը պետք է հաշվարկվի՝ հիմք ընդունելով հողամասի գնահատված շուկայական արժեքը: Հստակեցվել են նաև այն դեպքերը, երբ աճուրդը համարվում է չկայացած. հաջորդ փուլերում նախատեսվում է գնի աստիճանական նվազեցում՝ երկրորդ աճուրդի ժամանակ մեկնարկային գինը սահմանելով շուկայական արժեքի 85 տոկոսի չափով, իսկ երրորդ և հաջորդ փուլերում՝ 70 տոկոսի չափով: Բացի այդ, գյուղատնտեսական հողերի դեպքում սահմանվել է մեկ լոտի առավելագույն չափ՝ 20 հեկտար, իսկ նվազագույն չափը չպետք է պակաս լինի տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից:
- Վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին հայտարարությունները պետք է հրապարակվեն մրցույթից առնվազն մեկ ամիս առաջ՝ պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներով: Կարևոր է նկատի ունենալ, որ նախագծից հանվել են ռիելթորների միջոցով աճուրդներ անցկացնելու կարգավորումները, քանի որ պետական և համայնքային գույքի գործարքներն այլևս չեն մտնում ռիելթորական գործունեության մասին օրենքի կարգավորման դաշտ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1933-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 440–Ն, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 04.04.2026թ.)

- Նախագծով սահմանվում է, որ 2026թ. համար Հայաստանին հատկացված 8 հազար տոննա խոշոր եղջերավոր անասունների մսի սակագնային քվոտայի շրջանակներում 7,5 հազար տոննայից ոչ ավելի ծավալով միսն ազատվում է ներմուծման մաքսատուրքից,: Այս արտոնությունը տարածվում է բացառապես այն հումքի վրա, որը նախատեսված է մսամթերքի արտադրության համար:
- ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու է լինելու այս արտոնյալ ծավալները համամասնորեն բաշխել այն տնտեսվարողների միջև, որոնք արդեն իսկ ստացել են համապատասխան սակագնային քվոտաներ, պայմանով, որ նոր ծավալները չգերազանցեն նախկինում բաշխված չափաքանակները: Արտոնությունից օգտվելու համար մսամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունները պետք է լիազոր մարմին ներկայացնեն իրենց կանոնադրությունը և տեղեկատվություն նախորդ տարվա ընթացքում տվյալ ապրանքի ներմուծման, արտադրության և իրացման ծավալների վերաբերյալ: Վերամշակող ձեռնարկության կողմից ապրանքի ստացումը կամ դրա իրացումը հաստատող հիմնական փոուփաստաթուղթ է համարվելու ապրանքների մատակարարման հարկային հաշիվը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (N 469–Ն, ընդունված՝ 09.04.2026թ., ուժի մեջ՝ 11.04.2026թ.)

- Օժանդակության ծրագիրը նպատակ ունի խթանել ՀՀ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող ապրանքների արտահանումը դեպի Եվրոպական միության, Միացյալ Թագավորության և Կանադայի շուկաներ՝ մաքսատուրքերի փոխհատուցման միջոցով: ներկայացված որոշմամբ հիմնական փոփոխությունը վերաբերում է ՏԳՏԴ C 10.8 ապրանքային խմբին: Նախկինում այս ողջ խումբը սահմանված էր որպես բացառություն՝ նպատակ ունենալով կանխել ոչ հայկական հումքով արտադրանքի համար փոխհատուցման տրամադրումը, սակայն գործնականում դա խնդիրներ էր առաջացրել նաև հայկական ծագման ապրանքների համար: Այժմ բացառությունների ցանկը հստակեցվում է, և «C 10.8» ընդհանուր դասակարգիչը փոխարինվում է առավել նեղ՝ «C 10.81 և C 10.82» ենթախմբերով: Սա թույլ կտա խուսափել անհիմն մերժումներից և ապահովել, որ տեղական հումքով արտադրողները լիարժեք օգտվեն պետական աջակցությունից:

1. C 10.81՝ Շաքարի արտադրություն. Ներառում է շաքարի (եղեգնաշաքար, ճակնդեղի շաքար), շաքարային օշարակների և մաթի արտադրությունը:
2. C 10.82՝ Կակաոյի, շոկոլադի և շաքարային հրուշակեղենի արտադրություն. Ներառում է կակաոյի փոշու, յուղի, շոկոլադի, կոնֆետների, մարմելադի և այլ նմանատիպ քաղցրավենիքների արտադրությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1223-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին (N 467–Ն, ընդունված՝ 09.04.2026թ., ուժի մեջ՝ 10.04.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կենտրոնի ահազանգերի կառավարման վարչության համապատասխան աշխատանքները ներառել առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տևողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկում:

2026 թվականի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող իրանական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա կիրառելու մասին (N 472–Ն, ընդունված՝ 09.04.2026թ., ուժի մեջ՝ 11.04.2026թ.)

- 2026 թվականի համար սահմանվում են Իրանից Հայաստան ներմուծվող առանձին ապրանքատեսակների սակագնային քվոտաները: Ըստ կարգավորման՝ նախատեսված ծավալների շրջանակում իրանական ծագման ապրանքները կարող են ներմուծվել 0 տոկոս մաքսատուրքի դրույքաչափով, եթե առկա է ներմուծման լիցենզիա, որը բխում է ԵԱՏՄ-ի և Իրանի միջև կնքված Ազատ առևտրի մասին համաձայնագրից և նպատակ ունի ապահովել դրա կիրարկումն ու խթանել առևտրատնտեսական գործակցությունը: Լիցենզիաների տրամադրման համար լիազոր մարմին է ճանաչվում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Քվոտավորման ենթակա ապրանքների ցանկում ներառված են հիմնականում գյուղատնտեսական արտադրանքներ, այդ թվում՝ թռչնամիս, կարտոֆիլ, լոլիկ, կաղամբ, գազար, վարունգ, խնձոր և տոմատի մածուկ: Նախագծի ընդունումը պետական բյուջեի եկամուտների կամ ծախսերի փոփոխություն չի նախատեսում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 535–Ն, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 22.04.2026թ.)

- Հիմնական փփոխությունը բազմամասնաշենք քաղաքաշինական համալիրների համար հատուկ ռեժիմի սահմանումն է: Եթե նախկինում գործում էր «ամբողջական ավարտի և շահագործման» տրամաբանությունը, ապա այժմ թույլատրվում է ձևակերպել փուլային ավարտական ակտ և միջանկյալ շահագործման թույլտվություն:
- Սա նշանակում է, որ համալիրի կազմում ընդգրկված առանձին շենքերը կամ դրանց ինքնուրույն մասերը կարող են պաշտոնապես հանձնվել շահագործման, եթե դրանք տեխնիկապես պատրաստ են և անվտանգ, նույնիսկ եթե ողջ համալիրի շինարարությունը դեռ ընթացքի մեջ է: Միջանկյալ շահագործման թույլտվություն ստանալու համար սահմանվել են խիստ նախապայմաններ. օբյեկտը պետք է ունենա անվտանգ ու ինքնուրույն մուտքեր, ելքեր և անհրաժեշտ ինժեներական ենթակառուցվածքներ: Կառուցապատողը պարտավոր է ներկայացնել պայմանական սահմանազատման սխեմա, որով հստակ կտարանջատվեն շահագործվող տարածքները շինարարական գոտիներից՝ ապահովելով մարդկանց կյանքի և գույքի պաշտպանությունը: Հատկանշական է, որ միջանկյալ շահագործման իրավական կարգավիճակը պահպանվում է նույնիսկ այն դեպքում, եթե հետագայում ամբողջ համալիրի շինարարությունը կասեցվի կամ դադարեցվի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի N 1159-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին (N 503–Ն, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- Կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի «Օրենսդրական ակտի և կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» N 1159-Ն որոշման փոփոխությամբ սահմանվել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը տալիս է պարզաբանում ներքոհիշյալ բնագավառները կարգավորող օրենսդրական ակտերի (բացառությամբ ՀՀ Սահմանադրության) և ՀՀ կառավարության որոշումների վերաբերյալ՝ սպառողների շահերի պաշտպանության (սպառողների շահերի պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերով համագործակցելով Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի հետ), բացառությամբ ֆինանսական, ապահովագրական, առողջապահական ծառայությունների, կրիպտոակտիվների և բանկային գործունեության ոլորտների առնչությամբ օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների պաշտոնական պարզաբանման դեպքերի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (N 557–Ն, ընդունված՝ 23.04.2026թ., ուժի մեջ՝ 01.05.2026թ.)

- Էլեկտրոնային առողջապահության համակարգին միացած բժշկական հաստատությունները այսուհետ վճարային գործիքներով վճարում ընդունելիս պարտավոր են էլեկտրոնային ՀԴՄ կտրոնը գեներացնել հենց էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով: Այդ կտրոնում որպես պարտադիր վավերապայման պետք է ներառվի յուրաքանչյուր մատուցված բժշկական ծառայության համար համակարգի կողմից տրամադրված անհատականացված նույնականացման ծածկագիրը:
- Բացի այդ, էլեկտրոնային ՀԴՄ-ի կտրոններում ներդրվում են նոր պահանջներ դրոշմավորման ենթակա ապրանքների վաճառքի համար. այսուհետ պետք է նշվեն նույնականացման միջոցների քանակը և հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 30-ի N 1518-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (N 603–Ն, ընդունված՝ 30.04.2026թ., ուժի մեջ՝ 06.05.2026թ.)

- Փոփոխություններով օգտագործված կամ թափոն հանդիսացող էլեկտրոնային սարքավորումները (ԱՏԳ ԱԱ 8549) հանվում են արտահանման արգելքի բացառությունների ցանկից: Գործնականում այդ ապրանքները հաճախ ներմուծվում են վերամշակման նպատակով, վերածվում ջարդոնի և կրկին արտահանվում, ինչը հակասում է արգելքի տրամաբանությանը, քանի որ այդ երկրորդային հումքը կարող է ամբողջությամբ վերամշակվել Հայաստանում: Բացի այդ, ժամանակավոր արգելքի շրջանակում ներառվում են նաև պղնձե անոդները (ԱՏԳ ԱԱ 7402), որոնք պղնձի խորքային վերամշակման շղթայի կարևոր միջանկյալ օղակ են: Բացառություն է սահմանվում չօգտագործված որոշ կցամասերի (7307) և մետաղակոնստրուկցիաների (7308 90) համար, որոնք իրենց բնույթով երկրորդային հումք չեն և ունեն բարձր արժեք:
- Փոփոխություններով նաև հստակեցվում են այն դեպքերը, երբ ապրանքների տեղափոխումը կրում է տեխնիկական կամ պայմանագրային բնույթ: Մասնավորապես, արգելքը չի տարածվի այն ապրանքների վրա, որոնք ԵԱՏՄ երկրներ են ուղարկվում վերանորոգման նպատակով և ենթակա են հետադարձ վերադարձի, կամ որոնք վերադարձվում են անորակության պատճառով՝ երաշխիքային սպասարկման շրջանակներում:

Ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանությունը սահմանելու մասին (N 604-Ն, ընդունված՝ 30.04.2026թ., ուժի մեջ՝ 01.01.2027թ.)

- Նախագծով սահմանվել է ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանությունը: Մեթոդաբանության հիման վրա հաշվարկված ծանրաբեռնվածության աստիճանը արտացոլում է ջրօգտագործման ճնշումը վերականգնվող ջրային ռեսուրսների վրա և ընդգծում՝ առաջարկի և պահանջարկի հավասարակշռված կառավարման կարևորությունը: Այն թույլ կտա գնահատել երկրում ջրային ռեսուրսների և պաշարների վիճակը, ինչպես նաև դրանց օգտագործման մակարդակը՝ ըստ ջրի պահանջարկի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին (N 574-Ն, ընդունված՝ 30.04.2026թ., ուժի մեջ՝ 01.05.2026թ.)

- Փոփոխությունները պայմանավորված են ներդրումային ծրագրեր իրականացնող տնտեսվարողների համար մաքսատուրքից ազատման արտոնության տրամադրման ընթացակարգերի պարզեցման (հստակեցման) և ևս մեկ հեռանկարային ոլորտի խթանման անհրաժեշտությամբ: Գերակա ոլորտների ցանկի ընդլայնման առումով ներառվել է թափոնների մշակումը, ոչնչացումը և նյութերի վերականգնումը: Մյուս փոփոխությունը վերաբերում է հայտերի մերժման հիմքերի վերացման ժամկետներին: Նոր կարգավորումները կգործեն պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, սակայն չեն տարածվի մինչ այդ արդեն ներկայացված հայտերի վրա:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 414–Ա, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- Արտագնա դատական նիստ իրականացնելու հիմքերում ավելանում է ևս մեկ հիմք՝ բժշկական հարկադրանքի վարույթի շրջանակներում անձի հոգեկան առողջության վիճակով պայմանավորված անհնար է մեղադրյալի՝ դատական նիստին մասնակցության ապահովումը: Արտագնա նիստը կարող է անցկացվել հոգեբուժական կազմակերպությունում:
- Սահմանվում է նաև հստակ ժամկետ բժշկական հարկադրանքի վարույթ սկսելու համար, երբ հայտնաբերվում են դրա կիրառման հիմքեր քննիչն այսուհետ ոչ ուշ, քան այդ հիմքերն ի հայտ գալուց հետո 24 ժամվա ընթացքում պետք է որոշում կայացնի:

«Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 392–Ա, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- Սահմանվում է էներգիայի պահեստավորումը՝ որպես արտադրված էլեկտրաէներգիայի օգտագործման հետաձգում կամ դրա վերափոխում կուտակելի ձևի՝ հետագա օգտագործման համար: Այն սահմանվում է նաև որպես լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակ՝ ներառելով կայանի կառուցման և պահեստավորման փուլերը: Լիցենզիա ունեցող անձինք կարող են կառուցել կամ վերակառուցել պահեստավորման կայաններ, մեծածախ շուկայում գնել և վաճառել էլեկտրաէներգիա և մատուցել պահեստավորման ծառայություններ: Մինչև 1 ՄՎտ հզորությամբ կայաններում պահեստավորումը, ինչպես նաև 1 ՄՎտ-ից ավելի հզորությամբ կայաններում բացառապես սեփական կարիքների համար իրականացվող գործունեությունը չի լիցենզավորվում: Նման սուբյեկտներն օրենքի ուժով դառնում են էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներ: Լիցենզիաները կարող են տրամադրվել երաշխիքով կամ առանց դրա, այդ թվում՝ մրցույթի միջոցով: Սահմանվում են սահմանափակումներ, ըստ որոնց հաղորդման և բաշխման լիցենզիա ունեցող անձինք չեն կարող զբաղվել պահեստավորմամբ՝ բացառությամբ հատուկ դեպքերի:
- Նախատեսվում է ֆինանսական երաշխիքների ներկայացում լիցենզիա ստանալու և ժամկետների երկարաձգման համար. պարտավորությունների չկատարման դեպքում դրանք կարող են փոխանցվել պետական բյուջե, բացառությամբ անհաղթահարելի ուժի դեպքերի: Վերականգնվող էներգիայի ոլորտում որոշ դեպքերում լիցենզիա ստանալու համար պահանջվում է հրաժարվել էլեկտրաէներգիայի գնման պետական երաշխիքից, որը հետագայում չի կարող վերականգնվել:
- «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվում են էներգիայի պահեստավորման գործունեության համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը, որոնք տարբերակվում են ըստ կայանի կյանքի ցիկլի փուլերի և հզորության.

1. Էլեկտրաէներգետիկական համակարգում նոր պահեստավորող հզորությունների կառուցման կամ վերակառուցման ժամանակահատվածի համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով,
2. պահեստավորման գործունեության փուլի համար ելնելով կայանի դրվածքային հզորությունից, մասնավորապես՝ մինչև 15 մեգավատ հզորություն ունեցող կայանների համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով, 15-ից մինչև 50 մեգավատ հզորության համար՝ տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով, 50 մեգավատից բարձր հզորություն ունեցող կայանների համար՝ տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքի նախագծերին հավանություն տալու մասին (N 390-Ա, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- Քրեական դատավարության և դատական ակտերի կատարման փուլերում հիմնական բովանդակային փոփոխությունը ձերբակալված, կալանավորված կամ պատիժ կրող անձանց մասնակցության ապահովումն է տեսահաղորդակցության միջոցներով: Տեսակապի կիրառումը թույլատրվում է հստակ իրավաչափ նպատակներով, ինչպիսիք են հասարակական կարգի և առողջության պաշտպանությունը, անվտանգության ապահովումը կամ դատական քննության ողջամիտ ժամկետների պահպանումը: Տեսակապով մասնակցությունը բացառվում է, եթե մեղադրյալը կամ դատախազը ներկայացնում են փաստարկված առարկություն:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 462–Ա, ընդունված՝ 09.04.2026թ., ուժի մեջ՝ 10.04.2026թ.)

- Նախագիծը մշակվել է «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի (2010 թվականի արձանագրությամբ փոփոխված) համաձայն՝ վերջինով և Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված պարտավորությունները կատարելու նպատակով: Ստանդարտի լիարժեք և արդյունավետ կիրառումը հնարավոր է միայն ներքին օրենսդրության համապատասխանեցման և իրավական հստակ գործիքակազմի ներդրման միջոցով: Օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն միջազգային պարտավորություններից բխող նոր մոդելային օրենսդրության և գործող հարկային օրենսդրությունը՝ Ստանդարտի պահանջներին համապատասխանեցնելու պահանջներով, այլև համաշխարհային հարկային վարչարարության առաջատար փորձի ներդրման և արդյունավետ կիրառման անհրաժեշտությամբ: Միաժամանակ, օրենսդրական փոփոխությունները բխում են 2025 թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության կողմից առաջին անգամ տեղեկությունների ավտոմատ փոխանակումից հետո՝ իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները կարգավորելու անհրաժեշտությունից: Նախագծով առաջարկվում է համակարգային և համապարփակ մոտեցում, որի արդյունքում Օրենսգրքի ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների փոխանակման դրույթները կարգավորող 80.2 Գլուխն ամբողջովին վերաշարադրվել է՝ առաջնորդվելով Ստանդարտով և ՏՀԶԿ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ Ֆորումի Քարտուղարության կողմից 2025 թվականին մշակված մոդելային օրենսդրությամբ, ինչպես նաև վերջինիս կողմից տրված մեթոդական ցուցումներով և առաջարկներով, մասնավորապես՝
- Տրվել են Ստանդարտից բխող և Օրենսգրքում կիրառվող առանցքային հասկացությունների հստակ սահմանումներ, ինչը կապահովի դրանց միատեսակ մեկնաբանությունն ու համահունչ կիրառումը իրավակիրառ պրակտիկայում:
- Առաջարկվում է հաշվետու ֆինանսական հաստատությունների նկատմամբ համապատասխանության ճշտության ստուգման իրականացումը վերապահել ՀՀ հարկային մարմնին, քանի որ Ստանդարտը բացառապես կիրառվում է հարկային նպատակներով և գործընթացի ցանկացած փուլում միմիայն հարկային մարմինն է հանդիսանում որպես իրավասում մարմին:
- Ընդ որում, նախագծով ներկայացվում են նաև Օրենսգրքի հարկային ստուգումները կարգավորող 68-րդ Գլխի համապատասխան դրույթների փոփոխություններ, համաձայն որոնց առաջարկվում է ընդլայնել թեմատիկ հարկային ստուգման հարցերի շրջանակը, ավելացնելով ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության հարցը, որի արդյունքում հարկային մարմինը կարող է իրականացնել թեմատիկ ստուգում՝ բացառապես ֆինանսական հաշիվների համապատասխանության ճշտության հարցերով:
- Առաջարկվում է հաշվետերերի և վերահսկող անձանց նկատմամբ ևս կիրառել պատասխանատվության միջոցներ այն դեպքերում, երբ վերջիններս հաշվետու ֆինանսական հաստատություններին տրամադրում են կեղծ կամ թերի տեղեկություններ, կամ չեն տրամադրում պատշաճ ստուգման ընթացակարգերով սահմանված պարտադիր տեղեկությունները:
- Ֆինանսական հաստատությունների գործնական հնարավորություններին համապատասխանեցնելու նպատակով հարկային մարմնին տեղեկությունների ներկայացման ժամկետը երկարաձգվել է՝ գործող մայիսի 10–ը փոփոխելով հունիսի 30, ինչը կնպաստի ավելի ամբողջական և որակյալ տվյալների ներկայացմանը:
- Հստակեցվել են նաև հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից փաստաթղթերի պահպանության և հաշվառման դրույթները, համաձայն որի ֆինանսական հաշիվներին վերաբերող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային ծրագրերում և էլեկտրոնային կրիչներում առկա տեղեկատվությունը, Ֆինանսական հաստատությունը պահպանում է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի ժամկետով:

«Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 545–Ա, ընդունված՝ 23.04.2026թ., ուժի մեջ՝ 24.04.2026թ.)

- Ուժը կորցրած է ճանաչվում «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքը, ինչի արդյունքում ակնկալվում է ընդունել մեկ միասնական «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքը, որը համապարփակ ձևով կպարունակի անձանց կարգավիճակը և անձը հաստատող փաստաթղթերի մասին դրույթները: Այս փոփոխության հետ մեկտեղ, համապատասխանաբար կփոփոխվեն նաև հարակից օրենքները: Հանվում է հատուկ կացության կարգավիճակի ինստիտուտը՝ սահմանելով որոշ բացառություններ անցումային դրույթներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից օրենքի նախագծի փաթեթին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 453–Ա, ընդունված՝ 09.04.2026թ., ուժի մեջ՝ 10.04.2026թ.)

- Օրենսդրական փոփոխությունների փաթեթը նպատակ ունի Հայաստանի օրենսդրությունը համապատասխանեցնել բնապահպանական միջազգային կոնվենցիաների (Էսպո, Օրհուս) և Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) արձանագրության պահանջներին: Առանցքային բովանդակային փոփոխություններից է «հանրություն» և «շահագրգիռ հանրություն» հասկացությունների հստակեցումը: Էական փոփոխություններ են կատարվել ՇՄԱԳ-ի և փորձաքննության ենթակա գործունեության տեսակների ու դրանց շեմերի մեջ. մասնավորապես, հստակեցվել են դեղագործական արտադրության, ասբեստի մշակման և թղթի արտադրության պահանջները: Պետական կամ համայնքային դպրոցների և մանկապարտեզների կառուցումը կամ հիմնանորոգումը գոյություն ունեցող տարածքներում կազատվի առանձին ՇՄԱԳ փորձաքննությունից, քանի որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը կիրականացվի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության շրջանակներում: Բացի այդ, անտառապատման ծրագրերը խթանելու նպատակով նախատեսվում է դրանք ազատել ՇՄԱԳ-ի համար սահմանված պետական տուրքի վճարումից:

«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքի նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 483–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- Սննդամթերքի անվտանգության ոլորտի այս օրենսդրական փոփոխությունները հիմնականում ուղղված են դեպի Եվրոպական միության երկրներ ձկան և ձկնամթերքի արտահանման գործընթացի իրավական կարգավորմանը: Առանցքային բովանդակային նորույթը Եվրոպական միության Առևտրի վերահսկման և փորձագիտական (TRACES) համակարգում տնտեսավարողների գրանցման պարտադիր պահանջի և ընթացակարգերի սահմանումն է, ինչը պայմանավորված է Հայաստանի կողմից 2025 թվականի մարտից ստացված ձկնամթերքի արտահանման թույլտվությամբ: Փոփոխություններով Կառավարությանը լիազորություն է վերապահվում հաստատել համակարգում գրանցվելու, գրանցումը դադարեցնելու և արտահանման համար անհրաժեշտ առողջության սերտիֆիկատների տրամադրման կարգն ու պահանջները:
- Գործնական առումով սահմանվում է հստակ մեխանիզմ, ըստ որի՝ TRACES համակարգում գրանցվելու համար տնտեսավարողը պետք է դիմի Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, որից հետո իրականացվում է պարտադիր ստուգում՝ ԵՄ չափանիշներին համապատասխանությունը պարզելու համար:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 480–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- Փոփոխությունները նպատակ ունեն էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաները (էլեկտրոնային ՀԴՄ) դարձնել սովորական ՀԴՄ-ներին լիարժեք այլընտրանքային գործիք և ընդլայնել դրանց կիրառության ոլորտները: Նախագծով առաջարկվում է՝
- միասնականացնել ՀԴՄ-ին և էլեկտրոնային ՀԴՄ-ին վերաբերող այն բոլոր դրույթները, որոնք հնարավոր է լինելու կիրառել երկու գործիքների դեպքում,
- սահմանել լիազորող նորմ, որով Կառավարությունը կսահմանի՝

1. էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի տեխնիկական պահանջները, դրա հաշվառման, հաշվառումից հանման, դրա միջոցով գեներացվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին, ինտերնետային կայքի կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները, ինչպես նաև այլ հարկ վճարողի անունից էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենա կիրառելու և էլեկտրոնային կտրոն գեներացնելու կարգը,
2. այն գործունեության ոլորտները, դեպքերը և ժամկետները, երբ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վաճառք իրականացնելիս, աշխատանքներ կատարելիս կամ ծառայություններ մատուցելիս:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի փաթեթին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 491–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում և հարակից իրավական ակտերում նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն արդիականացնել ոլորտի պետական վերահսկողությունը՝ ներդնելով «պատասխանատու խաղի» կանոնները և սահմանափակելով չլիցենզավորված կազմակերպիչների գործունեությունը: Բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը գովազդային վիճակախաղերի խստացումն է. այսուհետ դրանց կազմակերպիչ կարող է լինել միայն սեփական ապրանքները կամ ծառայությունները գովազդող անձը, իսկ մրցանակային ֆոնդը պետք է լինի բացառապես իրային և չգերազանցի շրջանառության 0.5 տոկոսը: Գովազդի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով սահմանվում է, որ խաղերի և վիճակախաղերի ցանկացած գովազդ նախքան հրապարակումը պետք է էլեկտրոնային տարբերակով համաձայնեցվի լիազոր մարմնի հետ:
- Թվային միջավայրում սահմանվում է խիստ արգելք Հայաստանի տարածքում գտնվող օգտատերերի նկատմամբ արգելված գովազդի առցանց թիրախավորման վրա, այդ թվում՝ միջազգային հարթակների միջոցով: Գովազդատուները պարտավորվում են ձեռնարկել ողջամիտ տեխնիկական միջոցներ (geo-blocking)՝ Հայաստանի տարածքում նման գովազդի ցուցադրումը կանխելու համար: Ֆինանսական գործառնությունների մասով սահմանվում է, որ խաղադրույքները, հաշվի համալրումը և շահումների տրամադրումը պետք է կատարվեն բացառապես անկանխիկ եղանակով և հայկական դրամով (բացառությամբ հատուկ նույնականացված օտարերկրացիների): Բացի այդ, ներդրվում է անձի պարտադիր նույնականացման պահանջ նախքան խաղին մասնակցելը, և խստիվ արգելվում է այլ անձի պատկանող խաղային հաշվի օգտագործումը:
- Կազմակերպիչները պարտավոր են միանալ «Մոնիտորինգային կենտրոնին», որն իրականացնում է բոլոր խաղային օպերացիաների, շահումների և իրադարձությունների գրանցումն ու ռիսկերի գնահատումը: Ստուգումների համակարգում խաղային ոլորտի սուբյեկտների 70 տոկոսը պարտադիր դասակարգվելու է որպես բարձր ռիսկային, ինչը ենթադրում է տարեկան առնվազն մեկ ստուգում: Լիցենզավորման պայմանների պահպանումը վերահսկելու համար պետական մարմիններին թույլատրվում է իրականացնել հսկիչ գնումներ:
- Խաղասրահների համար սահմանվում են նաև տեխնիկական պահանջներ. դրանց ներսի տարածքը պետք է անտեսանելի լինի դրսից, իսկ տեսանկարահանման նյութերը պետք է պահպանվեն առնվազն 30 աշխատանքային օր:
- Պատասխանատվության միջոցները զգալիորեն խստացվել են. գովազդի ոլորտի խախտումների համար տուգանքը կարող է հասնել նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկին (2 միլիոն դրամ): Չլիցենզավորված կայքերը չարգելափակելու համար ինտերնետ օպերատորները կարող են տուգանվել մինչև 3 միլիոն դրամով: Հատկանշական է նաև, որ գովազդային վիճակախաղի կազմակերպումը պետական գրանցում չունեցող անձանց պատվիրելու դեպքում սահմանվել է տասը միլիոն դրամ տուգանք: Այս բոլոր փոփոխությունները միտված են լիցենզավորված շուկայի պաշտպանությանը և պետական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը:

«Հավատարմագրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 482–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- «Հավատարմագրման մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն արդիականացնել ոլորտի կարգավորումները, դրանք համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին (ԻՍՕ/ԻԷԿ 17011) և բարձրացնել համակարգի թափանցիկությունը:
- Առանցքային փոփոխություններից է հավատարմագրման էլեկտրոնային ավտոմատացված համակարգի (e-accreditation) ներդրումը, որի միջոցով իրականացվելու է ամբողջ գործընթացը: Հստակեցվում է նաև տերմինաբանությունը և ներդրվում են նոր հասկացություններ, այդ թվում՝ «համապատասխանության գնահատման սխեմա» և «տեխնիկական գնահատող»:
- Ընդլայնվում են Հավատարմագրման ազգային մարմնի (ԱՐՄՆԱԲ) լիազորությունները, որը իրականացնելու է նաև համապատասխանության հայտարարագրեր գրանցող և պետական գրանցում կատարող իրավաբանական անձանց վկայագրումը:
- Փոփոխություններով խստացվում են նաև պատասխանատվության միջոցները. եթե կազմակերպության հավատարմագրումը դադարեցվի կեղծ տվյալներ ներկայացնելու կամ առանց պատշաճ գնահատման փաստաթուղթ տրամադրելու հիմքով, դրա հիմնադիրը կամ ղեկավարը առնվազն վեց ամիս չի կարող նոր հայտ ներկայացնել:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 572–Ա, ընդունված՝ 30.04.2026թ., ուժի մեջ՝ 01.05.2026թ.)

- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է վերանայել բանկերի կողմից վճարվող շահաբաժինների հարկման մոտեցումները և բանկերի կողմից վճարվող շահաբաժինների համար սահմանել եկամտային հարկի կամ ոչ ռեզիդենտի շահութահարկի 15 տոկոս դրույքաչափ, եթե շահաբաժինները ստացվել են բանկերի կողմից թողարկված և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից: Միաժամանակ, առաջարկվում է բանկերի մասով վերացնել շահաբաժնից պահված եկամտային հարկի չափով վերաներդրում կատարելու պարագայում շահաբաժնից պահված հարկը վերադարձնելու հնարավորությունը:
- Նշյալ նախագծով առաջարկվում է սահմանել նաև, որ ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից բանկերից ստացվող՝ Կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինները ևս ենթակա են հարկման՝ 15 տոկոս դրույքաչափով, որի հաշվարկման և բյուջե վճարման պարտավորությունը կրելու է շահաբաժինը վճարող բանկը՝ որպես հարկային գործակալ: Ընդ որում, բանկերի բաժնետեր համարվող ռեզիդենտ շահութահարկ վճարողների կողմից բանկերից ստացվող շահաբաժինների մասով բանկի կողմից հաշվարկվող շահութահարկի գումարը ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար չի սահմանվում որպես շահութահարկի գումարից նվազեցվող գումար:
- Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով 2026 թվականի հուլիսի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակահատվածի համար առաջարկվում է սահմանել պետական տուրք բանկերի կողմից թողարկված և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված ֆոնդային բորսաներում չցուցակված բաժնետոմսերից վճարվող շահաբաժինների համար՝ շահաբաժինների 15 տոկոսի չափով:

«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 538–Ա, ընդունված՝ 23.04.2026թ., ուժի մեջ՝ 24.04.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է փոփոխություն կատարել օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցնելով, որ իրավաբանական և ֆիզիկական անձինք առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում, կառավարության սահմանած կարգով տեղյակ պահելով լիազոր մարմնին, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման, կարող են իրականացնել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման հետևյալ աշխատանքները.
- Բացառապես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող՝ սեփական տնտեսական և կենցաղային կարիքների բավարարման նպատակով՝ մինչև երկու մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև հինգ մետր խորությամբ.
- Շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ օրացուցային տարվա ընթացքում առավելագույնը 20 խորանարդ մետր ծավալով.
- Շահույթ ստանալու նպատակով պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ բազմաբնակարան շենքերի և հասարակական շինությունների կառուցման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով հաստատված նախագծային փաստաթղթերում նշված խորությամբ:
- Օրենսգրքի 62-րդ հոդվածից հանվում են «սեփական կարիքների համար» բառերը, ինչն իրավական հիմք է ստեղծում փոքր ձեռնարկությունների կողմից արդյունահանված հումքի օրինական իրացման համար:
- Միևնույն ժամանակ, առաջարկվող կարգավորումը նպատակ ունի ապահովել շինարարական գործընթացների և ընդերքի օգտագործման փոխկապակցված ու վերահսկելի իրականացումը՝ սահմանելով հստակ պայմաններ բազմաբնակարան շենքերի և հասարակական շինությունների կառուցման շրջանակներում իրականացվող պինդ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման համար՝ ապահովելով քաղաքաշինական ու անվտանգության նորմերի պահպանումը: Հորատապայթեցման աշխատանքների արգելքը, իր հերթին, ուղղված է անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ նվազեցնելով շրջակա միջավայրի և բնակչության համար հնարավոր ռիսկերը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 513–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- Քաղաքապետարանը կկարողանա կասեցնել և կնքել ապօրինի շինարարությունները, իսկ պահանջները չկատարելու դեպքում նախատեսվում է նաև քրեական պատասխանատվություն:
- Սահմանվում են նոր կանոններ ինքնակամ շինությունների, շենքերի արտաքին տեսքի, արևային կայանների, վենդինգ սարքերի և էլեկտրական ինքնագլորների օգտագործման համար, ինչպես նաև խստացվում են բեռնափոխադրումների պահանջները:
- Ներդրվում է թվայնացված միասնական հաշիվ համայնքի հանդեպ պարտավորությունների ավտոմատ մարման համար և ընդլայնվում են Երևանի վարկային հնարավորությունները: Միաժամանակ վարչական վարույթները հիմնականում իրականացվելու են գրավոր ընթացակարգով, իսկ որոշ դեպքերում շինությունները կարող են դատարանի որոշմամբ անցնել համայնքին:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության մասին (N 543–Լ, ընդունված՝ 23.04.2026թ., ուժի մեջ՝ 24.04.2026թ.)

- Նախագծերով նախատեսվում է զգալիորեն ընդլայնել խաղերին մասնակցությունն արգելված անձանց շրջանակը:
- Հիմնական փոփոխություններից մեկը վերաբերում է սոցիալապես անապահով խմբերի պաշտպանությանը. նախատեսվում է արգելել խաղերին մասնակցությունը այն քաղաքացիների համար, ովքեր հաշվառված են ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում կամ բնակվում են պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում: Բացի այդ, սահմանափակումներ են նախատեսվում պետական բյուջեից ֆինանսավորվող աջակցության ծրագրերի շահառուների համար: Ֆինանսական գործառնությունների մասով ներդրվում է խիստ արգելք այն բանկային քարտերի օգտագործման վրա, որոնց հաշվին մուտքագրվում են սոցիալական նպաստներ կամ կենսաթոշակային միջոցներ:

«Մաքսային միության և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին 2010 թվականի հուլիսի 5-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» արձանագրության նախագծի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին (N 536–Ա, ընդունված՝ 23.04.2026թ., ուժի մեջ՝ 24.04.2026թ.)

- «Մաքսային միության և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային օրենսդրության խախտումների համար քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունների մասին» 2010 թվականի պայմանագրում նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն սահմանել միասնական սկզբունքներ և մոտեցումներ ԵԱՏՄ իրավունքի պահանջները չպահպանելու համար պատասխանատվություն սահմանելիս: Այսուհետ պատասխանատվության միջոցներ սահմանելիս անդամ պետությունները պետք է հիմնվեն օրինականության, արդարության, մարդասիրության, օրենքի առջև հավասարության, անմեղության կանխավարկածի և պատժի համաչափության սկզբունքների վրա: Բովանդակային առումով կարևորվում է խախտումների դասակարգումը՝ ըստ դրանց բնույթի ու հանրային վտանգավորության աստիճանի, ինչպես նաև պատասխանատվության սուբյեկտների և պատիժների տեսակների հստակ սահմանումը: Որպես հիմնական մոտեցում ամրագրվում է կանխարգելիչ միջոցառումների առաջնահերթ կիրառումը նախքան բուն պատժի նշանակումը:

«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 589–Ա, ընդունված՝ 30.04.2026թ., ուժի մեջ՝ 01.05.2026թ.)

- Օրենքով ներդրվում է ԱԲ կիրառման իրավական հիմքը գնումների գործընթացում, ամրագրվում է հանրային հսկողության ինստիտուտը և խստացվում են մեկ անձից գնումների պայմաններն ու վերահսկողությունը: Միաժամանակ հստակեցվում է դրամաշնորհի կարգավորումը, որոշ դեպքերում թույլատրվում է անգլերենի կիրառումը, և ներդրվում է «հայելային» սկզբունքը՝ ՀՀ ռեզիդենտների նկատմամբ սահմանափակումներ կիրառող երկրների մասնակցությունը սահմանափակելու համար:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 486–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքում 2021թ, կատարված փոփոխություններով և ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 12-ի N1324-Ն որոշմամբ ներդրվեց օրինապահ հարկ վճարողի ինստիտուտը: Օրինապահ հարկ վճարողին վերաբերող հիմնական կարգավորումները սահմանված են օրենսգրքի 293.1-ին հոդվածով: Միաժամանակ, այդ հոդվածի 3-րդ մասով օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողության ժամկետը սահմանված է հավաստագրի տրամադրման օրվանից 12 ամիս: Օրինապահ հարկ վճարողի համակարգը առավել գրավիչ դարձնելու համար, անհրաժեշտություն է առաջացել վերանայելու օրենսգրքով սահմանված կարգավորումները և նախատեսել համակարգի ներդրման համար խրախուսման լրացուցիչ գործիքակազմ, ինչպես նաև կատարելագործել ու բարելավել օրնապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրմանը վերաբերող կարգավորումները: Այդ նպատակով օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ.
- Օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման գործընթացը չի վերաբերի ներդրումային ֆոնդերին, հաշվի առնելով, որ ներդրումային ֆոնդը կարող է հանդիսանալ նաև ակտիվների համախումբ և նրա փոխարեն հանդես է գալիս տվյալ ներդրումային ֆոնդի կառավարիչը, որը սահմանված կարգով կարող է դիմել և ստանալ հավաստագիր, ինչպես նաև կիրառվող շահութահարկի նվազ՝ 0.01% դրույքաչափը,
- Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադվելու է անժամկետ,
- Հարկային մարմինը իրականացնելու է օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների գործունեության մշտադիտարկում՝ եռամսյակային կտրվածքով, նպատակ ունենալով ապահովելու հարկ վճարողի շարունակական օրինապահ վարքագծի դրսևորումը,
- Կառավարության կողմից կսահմանվի հավաստագրի գործողության դադարեցման կարգը, որտեղ կնշվեն այն դեպքերը, երբ իրականացվող մշտադիտարկման արդյունքներով օրինապահ հարկ վճարողի հավաստագրի գործողությունը կդադարեցվի:
- Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների մասով հարկային մարմինը օրենսգրքով սահմանված հարկ վճարողների սպասարկման գործառույթը կիրականացնի անհատական՝ հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի միջոցով,
- Համալիր հարկային ստուգումների պլանավորման ընթացքում օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների դեպքում ռիսկայնությունը որոշող չափանիշները գնահատելիս կկկիրառվի 0,8 գործակից:
- Միաժամանակ, օրինապահ հարկ վճարողների համար վարչարարության բարենպաստ պայմանների ընդլայնման շրջանակներում նախատեսվում է հավաստագիր ունեցող օրինապահ հարկ վճարողների ԱԱՀ-ի գումարների փոխհատուցման մասով սահմանել առաջնահերթություն, մասնավորապես՝ վերանայելու ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները ռիսկային համարվելու չափանիշները:

«Դեղերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 476–Ա, ընդունված՝ 18.04.2026թ., ուժի մեջ՝ 19.04.2026թ.)

- Փոփոխություններով թույլատրվում է չգրանցված, սակայն հիմնական և ուռուցքաբանական դեղերի ներմուծումը՝ շուկայում դեղերի պակասուրդը կանխելու նպատակով: Ընդլայնվում է նաև բժշկական հաստատությունների կողմից սեփական կարիքների համար արտադրվող, գրանցում չպահանջող դեղերի ցանկը:
- ՊԱԳ և ՊԲԳ հավաստագրերը տրամադրվելու են մասնագիտական դիտարկումների հաշվետվությունների հիման վրա, իսկ անհրաժեշտ հավաստագրերի բացակայության դեպքում լիցենզիան կարող է անմիջապես դադարեցվել: Դեղագործական արտադրանք պահպանող մաքսային պահեստները պարտավոր կլինեն ստանալ մեծածախ իրացման լիցենզիա և անցնել ՊԲԳ հավաստագրում:
- Փոփոխություններով վերանայվում են նաև ներմուծման մերժման հիմքերը, թույլատրվում է վերապիտակավորում, ինչպես նաև նախկին փաթեթավորմամբ դեղերի իրացումը ևս վեց ամիս, եթե դա չի ազդում դեղի որակի վրա: Միաժամանակ հանվում է գովազդում գրանցման տվյալների պարտադիր նշման պահանջը:

«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 454–Ա, ընդունված՝ 09.04.2026թ., ուժի մեջ՝ 10.04.2026թ.)

- Նախագծով առաջարկվում է ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի մասնակիցների առավելագույն թիվը ներկայիս 49-ի փոխարեն սահմանել 99: Առաջարկվում է սահմանել, որ ոչ հրապարակային ֆոնդը կարող է ունենալ ոչ ավելի, քան 99 մասնակից: Մասնակիցների թիվը 99-ից անցնելու դեպքում ոչ հրապարակային ֆոնդը պարտավոր է 90 օրացուցային օրվա ընթացքում սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով վերագրանցվել որպես հրապարակային ֆոնդ կամ համապատասխանաբար կրճատել իր մասնակիցների թիվը: Որպես հրապարակային ֆոնդ վերագրանցվելու կամ մասնակիցների թիվը կրճատելու պահանջը չկատարման դեպքում ոչ հրապարակային ֆոնդը ենթակա է դատական կարգով լուծարման:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին և հարակից օրենքի նախագծին հավանություն տալու մասին (N 394–Ա, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- Փոփոխությունների հիմքում ընկած է կադաստրային քարտեզներում առկա տեխնիկական և իրավական անհամապատասխանությունների վերացումը: Սխալ է համարվում ցանկացած տարբերություն, որը հանգեցնում է գույքի չափերի, մակերեսի, տեղադիրքի կամ նպատակային նշանակության սխալ արտացոլմանը: Ուղղման հիմք են հանդիսանում որակավորված անձի կազմած հատակագիծը և եզրակացությունը: Նախատեսվում են բացառություններ, երբ հարևանների համաձայնությունը պարտադիր չէ. օրինակ՝ եթե սահմանները համընկնում են նախկինում գրանցված տվյալների հետ և դա հաստատվում է օրթոֆոտոհատակագծերով:
- Եթե սեփականատերը մահացել է և 8 ամսում իրավահաջորդ չի ներկայացել, ուղղումն իրականացվում է առանց նրա համաձայնության: Պետական կամ համայնքային հողերի դեպքում գործում է «լռությունը համաձայնություն է» սկզբունքը՝ 15 աշխատանքային օրում պատասխան չլինելու դեպքում: Կադաստրային վերանայման արդյունքում, եթե հողամասի մակերեսը նվազում է, համայնքը տրամադրում է փոխհատուցում: Եթե մակերեսը մեծանում է, գրանցումը կատարվում է անվճար, սակայն գույքի հետագա օտարման դեպքում պետք է վճարվի ավելացած մասի արժեքը, իսկ որոշ դեպքերում՝ անմիջապես ուղղման պահին:
- Սահմանվում է, որ 2024թ. հուլիսի 1-ից հետո գլխավոր հատակագծեր կամ գոտիավորման նախագծեր չունեցող համայնքներում չի թույլատրվի նոր կառուցապատում:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին (N 411–Ա, ընդունված՝ 02.04.2026թ., ուժի մեջ՝ 03.04.2026թ.)

- Նածագծով հետադարձ հիպոթեքը սահմանվում է որպես բնակելի գույքի գրավի հատուկ տեսակ, որի դեպքում բանկը կենսաթոշակային տարիքի հասած անձի օգտին կատարում է պարբերական վճարումներ, իսկ վերջինս պահպանում է իր բնակարանում ապրելու և սեփականության իրավունքը: Սահմանվում է նաև, որ պարտավորությունը սահմանափակվում է միայն գրավադրված գույքի իրացումից ստացված գումարով. պակասուրդը չի կարող գանձվել այլ գույքի հաշվին: Օրենսգրքով նախատեսվում է նաև նոր մոտեցում ամուսինների գույքային հարաբերություններին. ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը կարող է գրանցվել որպես մեկ ամուսնու բացառիկ սեփականություն, և այդ դեպքում այն չի ներառվում ժառանգության զանգվածում մինչև մյուս ամուսնու մահը:
- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններով հետադարձ հիպոթեքը ներառվում է գրանցման ենթակա իրավունքների ցանկում, ինչպես նաև պարզեցվում է գույքի գրանցման կարգը՝ թույլ տալով այն գրանցել որպես համատեղ կամ բացառիկ սեփականություն՝ ամուսինների համատեղ դիմումի հիման վրա:
- ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսվում են արտոնություններ՝ հետադարձ հիպոթեքի շրջանակում ստացվող վճարումները չեն հարկվում եկամտային հարկով, իսկ բանկի կողմից նման գույքի օտարումը ազատվում է ԱԱՀ-ից:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«Օդային փոխադրումներ իրականացնողների և օդանավ շահագործողների համար ուղեւորների, թռիչքային և սպասարկող անձնակազմի, ուղեբեռի, բեռի և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության նվազագույն պահանջների սահմանման մասին» օրենք (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագիծը սահմանում է օդային փոխադրումներ իրականացնողների և օդանավ շահագործողների պատասխանատվության ապահովագրության նվազագույն պահանջները: Նախագծի նպատակն է օրենսդրությունը ներդաշնակեցնել ԵՄ ավիացիոն կանոնակարգերին և չափանիշներին:
- Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ օդային տարածքում բոլոր օդային փոխադրողների և շահագործողների նկատմամբ: Բացառություն են կազմում որոշ պետական օդանավեր, 20 կգ-ից պակաս քաշով մոդելային օդանավերը, օդապարիկները, պարաշյուտները և որոշ փոքր կամ ոչ առևտրային նպատակով օգտագործվող թռչող սարքեր: Ապահովագրությունը պարտադիր պետք է առկա լինի յուրաքանչյուր թռիչքի համար: Այն ծածկում է ուղևորներին, անձնակազմին, ուղեբեռին, բեռներին և երրորդ անձանց հասցված վնասները, ընդ որում՝ ապահովագրվող ռիսկերի թվում են նաև ռազմական գործողությունները, ահաբեկչությունը, օդանավի հափշտակումը կամ անօրինական զավթումը և քաղաքացիական խռովությունները: Նվազագույն ապահովագրական ծածկույթի չափերը Փոխհատուցումները հաշվարկվում են ՓՀԻ-ով (Փոխառության հատուկ իրավունք).՝

1. մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում փոխհատուցումը կազմում է առնվազն 250,000 ՓՀԻ յուրաքանչյուր անձի համար: (փոքր, ոչ առևտրային օդանավերի դեպքում այն կազմում է 100,000 ՓՀԻ մեկ ուղևորի համար):
2. ուղեբեռի կորստի կամ վնասման դեպքում առևտրային փոխադրումների ժամանակ նախատեսվում է 1,519 ՓՀԻ մեկ ուղևորի համար, իսկ բեռի դեպքում՝ 26 ՓՀԻ մեկ կիլոգրամի համար.
3. երրորդ անձինք: Երրորդ անձանց պատճառված վնասի փոխհատուցումը կախված է օդանավի առավելագույն թռիչքային քաշից (ԱԹՔ) և ըստ կատեգորիաների տատանվում է 0.75 միլիոնից մինչև 700 միլիոն ՓՀԻ մեկ պատահարի համար:

- Հայաստանի օդային տարածքով թռիչքներ իրականացնող բոլոր՝ այդ թվում օտարերկրյա փոխադրողները, պարտավոր են լիազոր մարմնին ներկայացնել ապահովագրության վկայագրեր: Եթե լիազոր մարմինը չի հավաստիանում ապահովագրական ծածկույթի պատշաճության հարցում, նրան իրավունք է վերապահվում արգելել տվյալ օդանավի վերասլացքը, ինչպես նաև կիրառել օրենքով սահմանված պատասխանատվության այլ միջոցներ:
- Նախատեսվում է, որ օրենքն ուժի մեջ կմտնի 2027 թվականի հունվարի 1-ից:

«Մաքսային կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագիծը նպատակ ունի որոշակիացնել մաքսային ստուգումների իրականացման գործընթացը, հստակեցնել մաքսային ստուգումների գծով չկարգավորված հարաբերությունները, ամրագրել մաքսային ստուգմանը վերաբերող փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով ծանուցման դրույթները, վերանայել պատասխանատվության նորմերը մաքսային ստուգման արդյունքներով հայտնաբերված իրավախախտումների համար: «Մաքսային կարգավորման մասին» օրենքում նախագծով առաջարկվում է՝
- սահմանել, որ կամերալ ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 40 աշխատանքային օրը, կամերալ ստուգման սկսելու մասին ստուգման ենթակա անձը պետք է ծանուցվի.
- հանել կամերալ մաքսային ուսումնասիրության տեսակը, որը կրկնում է մաքսային հսկողության ձևերը.
- սահմանել ստուգման ժամկետի կասեցման վերացման դեպքերը, ինչպես նաև գործնականում հանդիպած և հարկային օրենսգրքով սահմանված կասեցման հիմքերի համանմանությամբ սահմանել նաև մաքսային ստուգման ժամկետի կասեցման համապատասխան հիմքեր.
- սահմանել մաքսային ստուգման ակտի վերաբերյալ ստուգվող անձի կողմից առարկություններ ներկայացնելու ժամկետ.
- սահմանել ստուգման արդյունքների ամփոփման հիման վրա՝ մաքսային մարմնի կողմից կայացվող որոշումների տեսակները
- սահմանել և հստակեցնել մաքսային ստուգմանն առնչվող փաստաթղթերի ծանուցման եղանակները: Մասնավորապես՝ որպես ծանուցման եղանակներ սահմանվել են՝ առձեռն եղանակը, էլեկտրոնային փոստը, փոստային կապը և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգը:

- Ընդ որում, հարկային մարմինների հետ իրականացվող բացառապես փաստաթղթաշրջանառությանը համանման մաքսային ստուգումների մասով նույնպես նախատեսվել է տվյալ ծանուցման էլեկտրոնային եղանակը.
- վերացնել մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող առանձին անձանց համար կրկնվող պահանջները.
- սահմանել պատասխանատվություն մաքսային ստուգման արդյունքում հայտնաբերված իրավախախտումների համար՝ կազմակերպությունների նկատմամբ: Այսպես, բացի պակաս հաշվարկված հարկերի գումարների և տուժերի գումարների, գանձվելու է նաև չհաշվարկված կամ պակաս հաշվարկված ընդհանուր գումարների քսան տոկոսի չափով տուգանք, բացառությամբ պայմանական բաց թողնված ապրանքները կամ տրանսպորտային միջոցները բաց թողնելու պայմանի խախտման դեպքերի, երբ տուգանքը հաշվարկվելու է 50 տոկոսի չափով:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենք (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխությունները նպատակաուղղված են արդիականացնելու թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի քրեաիրավական գործիքակազմը: Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության կամ իրացման պատասխանատվության կարգավորումները լրացվել է նոր հատկանիշներով: Որպես պատասխանատվությունը խստացնող նորմ է սահմանվել հանցանքը «տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով» կատարելը: Միաժամանակ, սահմանվել է նաև խիստ պատիժ, եթե արարքը կատարվել է անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ:

«**Ներդրումների մասին» օրենք (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)**

- Նախագծի ընդունումը պայմանավորված է ներդրումային հարաբերությունների համապարփակ ու նորովի կարգավորման անհրաժեշտությամբ: Ներկայիս «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը չի ապահովում ռեժիմների կանխատեսելիություն, պետական քաղաքականության թափանցիկություն և խրախուսման համաչափություն: Նախագիծը նպատակ ունի ամբողջությամբ փոխել դեռևս 1994թ. ընդունված օրենքը, ստեղծելով ներդրումների ժամանակակից, պարզ և կանխատեսելի իրավական միջավայր:
- Ի տարբերություն գործող օրենքի նախագիծը կարգավորում է ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական (ներքին) ներդրումների հարցերը:
- Հստակեցվում է «ներդրում» հասկացությունը: Օրենքը չի տարածվում պորտֆելային ներդրումների վրա (կարճաժամկետ եկամտի նպատակով ընկերության 10%-ից պակաս բաժնետոմսերի ձեռքբերում, որը կառավարման իրավունք չի տալիս).

1. ներդրողների հիմնարար իրավունքներ և պաշտպանության երաշխիքներ՝
2. օտարերկրյա ներդրողներին տրվում են տեղական ներդրողներին հավասար իրավունքներ, ինչպես նաև պայմաններ, որոնք պակաս բարենպաստ չեն այլ պետությունների ներդրողներին տրվող պայմաններից.
3. սահմանվում են ուղղակի և անուղղակի էքսպրոպրիացիայի հասկացությունները: Օրինական օտարման դեպքում (հանրային գերակա շահ) երաշխավորվում է արագ, համարժեք (շուկայական արժեքով) և արդյունավետ փոխհատուցում.
4. կայունության երաշխիք՝ եթե օրենքով սահմանված երաշխիքները փոփոխվեն ի վնաս ներդրողի, ապա արդեն իսկ արված ներդրումները կշարունակեն պաշտպանվել հին պայմաններով ևս հինգ տարի.
5. երաշխավորվում է կապիտալի, գույքի անարգել ներմուծումն ու արտահանումը, արտարժույթի փոխարկումը և շահույթի դուրսբերումը:

- Ներդրումային խթանները (արտոնություններ)՝
- պետությունը կարող է տրամադրել տարատեսակ խթաններ՝ ֆիսկալ (հարկային, մաքսային), ֆինանսական, պարզեցված վարչարարություն, հողամասի ձեռքբերման կամ ենթակառուցվածքների զարգացման աջակցություն.
- արտոնությունները կարող են տրամադրվել ոչ միայն օրենքներով, այլև Կառավարության և ներդրողի միջև կնքվող կոնկրետ ներդրումային պայմանագրերով՝ հաշվի առնելով առանձնահատկությունները:
- Վեճերի լուծում և արդարադատություն.
- Ներդրողներն իրավունք ունեն վեճերը լուծել դատարաններում կամ միջազգային համաձայնագրերով նախատեսված միջազգային արբիտրաժում:
- Պարտադիր պայման է, որ պետական մարմնի հետ վեճի դեպքում կողմերը նախ պետք է փորձեն այն լուծել բանակցությունների միջոցով:
- Քանի որ օրենքը տարածվելու է նաև տեղական ներդրողների վրա, նրանց գույքային և այլ (ոչ բաժնեմասնակցային) ակտիվների համար սահմանվել է օրենքի կիրառման աստիճանական անցում.
- օրենքն ուժի մեջ մտնելու պահից այն կտարածվի տեղացի այն ներդրողների վրա, որոնց ներդրումը գերազանցում է 500 մլն դրամը,
- 2028թ. հունվարի 1-ից կտարածվի 200 մլն դրամը գերազանցող ներդրումների վրա,
- 2030թ. հունվարի 1-ից կտարածվի բոլոր տեղական ներդրողների վրա՝ անկախ գումարի չափից:

Ստորև ներկայացված նախագծերը ընդունվել են երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենք (հասանելի է հետևյալ հղումով)

- «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում կատարված լրացումներով ընդլայնվում է հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցների ցանկը: Օրենսդրական ակտով ամրագրվում է, որ ծառայողների համար նախատեսված դրամական պարգևատրումից բացի, որպես խրախուսանքի տեսակ, կարող է կիրառվել նաև ծառայողին մեդալով կամ կրծքանշանով պարգևատրելը: Օրենքում կատարված մեկ այլ լրացմամբ սահմանվում է լիազորող նորմ, որը վերաբերում է ծառայողների նյութատեխնիկական ապահովման ընթացակարգերին: Մասնավորապես, ամրագրվում է, որ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատուկ միջոցներ հատկացնելու, ինչպես նաև դրանք պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք (հասանելի է հետևյալ հղումով), «Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք (հասանելի է հետևյալ հղումով) և «Տնտեսական մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենք (հասանելի է հետևյալ հղումով)

- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքով հստակեցվում և ընդլայնվում են հիմնական հասկացությունները, սահմանվում է ապրանքի պայմանագրին համապատասխանության նոր կարգավորում, այդ թվում՝ թվային տարր պարունակող ապրանքների դեպքում: Ամրագրվում են վաճառողի պարտականությունները թարմացումների, սխալ տեղադրման, երաշխիքների և տեղեկատվության տրամադրման մասով, ինչպես նաև սպառողի իրավունքները՝ ոչ պատշաճ որակի կամ անհամապատասխան ապրանքի դեպքում (վերանորոգում, փոխարինում, գնի իջեցում կամ պայմանագրի լուծում): Սահմանվում են անհամապատասխանության մասին տեղեկացման, ապացուցման և թերությունների վերացման հստակ ժամկետներ: Ընդլայնվում են հեռակա և ձեռնարկության շենքից դուրս կնքվող պայմանագրերի դեպքում սպառողի պաշտպանության երաշխիքները, ներառյալ՝ պայմանագրից 14-օրյա հրաժարվելու իրավունքը, առաքման ժամկետները և ռիսկերի բաշխումը:
- «Գովազդի մասին» օրենքով սահմանվում են մոլորեցնող և համեմատական գովազդի հստակ չափորոշիչներ, ուժեղացվում են անբարեխիղճ գովազդի դեմ երաշխիքները, և ամրագրվում է, որ գովազդում ներկայացված տվյալների ճշգրտության ապացուցման պարտականությունը կրում է գովազդատուն: Համեմատական գովազդը թույլատրվում է միայն օբյեկտիվ, ստուգելի և սպառողին չմոլորեցնող պայմաններում: Փոփոխությունների ընդհանուր նպատակն է ուժեղացնել սպառողների իրավունքների պաշտպանությունը, ապահովել բարեխիղճ մրցակցություն և ՀՀ օրենսդրությունը լիարժեք համապատասխանեցնել ԵՄ իրավական չափանիշներին: Փոփոխությունների կամ լրացումների մասին օրենքը ուժի մեջ կմտնի 2026 թվականի հուլիսի 1-ից:

«Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի է հետևյալ հղումով), «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենք (հասանելի է հետևյալ հղումով) և հարակից օրենքներում փոփոխություն կատարելու մասին օրենք

- Փաթեթով կատարվում են մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են ծանուցման կարգերի արդիականացմանը, «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքոում հրապարակային ծանուցման մամուլում հրապարակելու միջոցը փոխարինվում է կայքում (azdarar.am) տեղադրելու միջոցով: Նույն փոփոխությունները կատարվում են նաև առանձին իրավական ակտերի ծանուցումների վերաբերյալ դրույթներում: Փոփոխությունները կատարվում են նաև առանձին իրավական ակտերի ծանուցումների վերաբերյալ դրույթներում, ինչպիսիք են՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքը, «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքը, «Սնանկության մասին» օրենքը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքը, «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքը, «Ապահովված հիպոթեքային պարտատոմսերի մասին» օրենքը, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքը, ՀՀ ջրային և հողային օրենսգրքերը և այլն:

- Միաժամանակ, բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների համար վերացվում է հաշվեկշիռը առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակելու և որպես հավաստում թերթի օրինակը ներկայացնելու պահանջը: Դրա փոխարեն բանկերը պարտավորվում են ներկայացնել հաշվեկշռի վերաբերյալ հրապարակային ծանուցման նույնականացման համարը կամ հայտարարությունը հրապարակված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային փաստաթուղթը, ինչպես նաև հրապարակային ծանուցման հղումը:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>), «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>) և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենք

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված լրացումներով ամրագրվում է էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի առգրավման իրավական հնարավորությունը: Օրենքներով սահմանվում են արձանագրման պայմանները, մասնավորապես, եթե բանկային կամ հարակից գաղտնիք կազմող փաստաթղթերի առգրավումը կատարվում է էլեկտրոնային եղանակով, ապա արձանագրությունում դրա մասին կատարվում է նշում: Առգրավման արձանագրության պատճենը այն անձին, որից առգրավվել են տվյալ փաստաթղթերը, ևս հանձնվում է էլեկտրոնային եղանակով: Օրենսդրությամբ ամրագրվում է, որ էլեկտրոնային եղանակով առգրավում կատարելու դեպքում առգրավման արձանագրությանը պարտադիր կցվում է առգրավման կատարման փաստը հավաստող փաստաթուղթը, որը ներբեռնվում է ինքնաշխատ եղանակով: «Բանկային գաղտնիքի մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքներում ևս ամրագրվում են տեղեկությունների փոխանցման և ներկայացման պայմանները: Օրենքով նախատեսված համապատասխան դեպքերում տեղեկությունները և փաստաթղթերը կարող են տրամադրվել ոչ միայն ծրարում կամ փակ և փակվող մասում գործադիր մարմնի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի կողմից ստորագրված ծրարում, այլ նաև էլեկտրոնային եղանակով:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>)

- «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքում կատարված փոփոխությամբ սահմանվում է, որ հանրային բուհում ակադեմիական կամ վարչական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավար պաշտոններում ընտրված կամ նշանակված անձի լիազորությունները ենթակա են դադարեցման ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին: Այս նորմը տարածվում է նաև հետազոտական համալսարանի կազմում գործող գիտական կազմակերպության ղեկավարի, ղեկավարի տեղակալների և դրա ակադեմիական կառուցվածքային միավորների ղեկավարների պաշտոնների վրա: Օրենսդրությամբ ամրագրվում է, որ համապատասխան ուսումնական տարիների համար բակալավրի և անընդհատ ու ինտեգրացված կրթական ծրագրերով մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը, ինչպես նաև առկա ուսուցմամբ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ ընդունելության տեղերը հաստատում է Կառավարությունը: Օրենքով սահմանվում է, որ մինչև մասնակի բեռնվածությամբ ուսումնառության գործընթացների ներդրումն ու կազմակերպումը, բուհերում հեռակա ուսուցման ընդունելության հարաբերությունները շարունակում են կարգավորվել «Կրթության մասին» օրենքի համապատասխան դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենք (հասանելի է հետևյալ <u>հղումով</u>) և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

- Փոփոխություններով ներդրվում է ոստիկանության ծառայողների կատարողականի տարեկան գնահատման և պարտադիր վերապատրաստման համակարգ, որի արդյունքները հիմք կծառայեն առաջխաղացման կամ սահմանափակումների համար: Փրկարար ծառայության ոլորտում վերանայվում են ատեստավորման ժամկետներն ու անցումային կարգավորումները:
- Ընտանեկան բռնության վերաբերյալ փոփոխություններով ընդլայնվում է ընտանիքի անդամների շրջանակը, իսկ ոստիկանությունը պարտավորվում է միջոցներ ձեռնարկել տուժած անձանց ապաստարան տեղափոխելու ուղղությամբ:
- «Օտարերկրացիների մասին» օրենքով սահմանվում է հատուկ ընթացակարգ հետախուզվող օտարերկրացիների կողմից ՀՀ սահմանը հատելու համար՝ ոստիկանության տրամադրած փաստաթղթի հիման վրա:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու» (հասանելի է հետևյալ հղումով), «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու» (հասանելի է հետևյալ հղումով) և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու» (հասանելի է հետևյալ հղումով) մասին օրենք

- ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով.
  1. կամերալ (ներքին) ուսումնասիրության շրջանակները ուսումնասիրության և վերլուծության առումով հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և տեղեկություններիի հետ միասին ներառելու է նաև հարկային մարմնին հայտնի դարձած այլ տեղեկությունները.
  2. գործող կարգավորումներով հարկային մարմնի կողմից թեմատիկ ուսումնասիրության իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ հարկային մարմնի իրականացրած բացառապես կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հաստատապես հայտնի հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքները: Այս կարգավորումից հանվել է «հաստատապես հայտնի» ոզրույթը.
  3. ներկայումս յուրաքանչյուր հարկ վճարողի մասով թեմատիկ ուսումնասիրությունների հանձնարարագիր կարող է հրապարակվել ոչ ավելի, քան յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում մեկ անգամ: Նշված սահմանափակումը հանվել է, և թեմատիկ ուսումնասիրություն կարող է իրականացվել համապատասխան հիմքերի առկայության դեպքում, առանց քանակային սահմանափակման:
- Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքով հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարները չկատարելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված 10 միլիոն դրամը (խոշոր) և 20 միլիոն դրամը (առանձնապես խոշոր) գերազանցելու դեպքում: Փոփոխությամբ վերանայվել են վերոնշյալ չափերը: Խոշոր չափ է համարվում մեկ հարկային տարվա ընթացքում 30 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 45 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը: Առանձնապես խոշոր չափ է համարվում մեկ հարկային տարվա ընթացքում 50 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 75 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը:
- Գործնականում հարկային մարմինը քրեական վարույթ նախաձեռնելու հաղորդում կներկայացնի այն դեպքում, երբ վարչական ակտը մտել է ուժի մեջ և սպառվել են վարչական բողոքարկման բոլոր փուլերը:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու» մասին օրենք (հասանելի է հետևյալ հղումով)

- Սահմանված ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները լրացվում են ոսկուց, այդ թվում՝ ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման նոր կանոններ.
  1. արտադրողի կողմից իրականացված օտարման գործարքների մասով հարկման բազա է համարվում օրենսգրքի 61-րդ հոդվածով հաշվարկվող հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ դրանց իրական արժեքի 80 %-ի և օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերով հիմնավորված՝ տվյալ իրի արտադրության համար օգտագործված ոսկու և թանկարժեք քարերի ձեռք բերման գնի դրական տարբերությունը: Նշված կարգով հաշվարկվող բազան չի կարող պակաս լինել օրենսգրքի 61-րդ հոդվածով հաշվարկվող բազայի կամ վերը նշված գործարքների իրական արժեքի 80 %-ի 10 %-ից.
  2. առևտրական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից իրականացված օտարման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հաշվարկվող հարկման բազայի կամ իրական արժեքի 80% և հիմնավորված փաստաթղթերով տվյալ իրի ձեռք բերման գնի (ներառյալ՝ ԱԱՀ-ն) դրական տարբերությունը:
- Լրացվել են հաշվանցումների սահմանափակումները՝ ոսկուց պատրաստված իրերի առևտրական գործունեությամբ զբաղվող անձինք հաշվանցում կամ պակասեցում չեն կատարում այդ իրերի օտարման գործարքներին վերագրվող՝ հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում կամ ներմուծման հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի չափով: Նշված սահմանափակումը չի տարածվում ԱԱՀ-ի 0% դրույքաչափով հարկման ենթակա գործարքների վրա:
- Փոփոխությունների կամ լրացումների մասին օրենքը ուժի մեջ կմտնի 2026թ. հուլիսի 1-ից: Նոր կանոնները կիրառվում են այդ ժամկետից հետո կատարվող ոսկուց պատրաստված իրերի օտարման գործարքների և դրանց վերագրվող փաստաթղթերում առանձնացված ԱԱՀ-ի գումարի մասով: Մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ձեռք բերված նշված իրերի ձեռք բերման գնի մեջ ԱԱՀ-ի գումարը չի ներառվում՝ առևտրական գործունեությամբ զբաղվողների համար նախատեսված կարգով ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման նպատակով:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթներում՝ կառուցապատողներին թույլ տալով կառուցապատողի հատուկ հաշվի միջոցների հաշվին ձեռք բերելու պետական դրամային պարտատոմսեր, որոնց դիմաց ստացված տոկոսային եկամուտը կմուտքագրվի կառուցապատողի բանկային հաշվին, իսկ պարտատոմսերի մարումից կամ իրացումից ստացվող միջոցները՝ բացառապես կառուցապատողի հատուկ հաշվին:
- Նախատեսվում է նաև, որ կառուցապատողի հատուկ հաշվի մնացորդի համար օրենսգրքով սահմանված սահմանափակումները (գրավադրում, արգելադրում, բռնագանձում և այլն) հավասարապես կիրառելի են նաև պարտատոմսերի նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծերով առաջարկվում է ամրագրել, որ ընդերքօգտագործման իրավունքի, շինարարության և քանդման թույլտվությունների, ինչպես նաև ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ համապատասխան տվյալները ենթակա են թեմատիկ տարածական շերտերով և մետատվյալներով ազգային գեոպորտալում արտացոլման: Միաժամանակ, նախատեսվում է հստակեցնել այդ տվյալների ինտեգրման ժամկետը և, համապատասխան դեպքերում, տվյալ ակտերի ուժի մեջ մտնելու կամ իրավաբանական հետևանքների առաջացման կապը ազգային գեոպորտալում դրանց արտացոլման հետ:

««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքից հանել հսկողության ենթակա անձանց համաձայնության հիման վրա ֆինանսական հաստատությունների կողմից ՀՊՈՒ-ի արդյունքների տրամադրման վերաբերյալ դրույթը:

Գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի, ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի, ավազակոպճային և ավազակոպճագլաքարային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման միասնական կարգը: Միաժամանակ առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 18-Ն որոշումը, որը վերաբերում է միայն Արաքս գետին: Նախագծով սահմանվում են արդյունահանման իրականացման պայմանները, սահմանափակումները և վերահսկողության մեխանիզմները, ներառյալ՝ գետի հունի և հիդրոմորֆոլոգիական կայունության պահպանման պահանջները, մշտադիտարկման իրականացումը և դրա արդյունքների թվայնացված ներկայացումը: Սահմանային շերտում նախատեսվում են լրացուցիչ պահանջներ, այդ թվում՝ GPS համակարգերով հագեցած տեխնիկական միջոցների կիրառումը: Նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում կատարված փոփոխություններով և նպատակ ունի ապահովել ոլորտի միասնական կարգավորում, բարձրացնել վերահսկելիությունը և նվազեցնել շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:

Կրիպտոակտիվների սկզբանական արժեքի որոշման համար հիմք հանդիսացող բորսաների ցանկը սահմանելու մասին (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագծով սահմանվում է, որ կրիպտոակտիվների սկզբանական արժեքի որոշման համար հիմք հանդիսացող բորսաներն են. Binance Holdings Limited (https://www.binance.com/), Bybit Fintech Limited (https://www.bybit.com/), Aux Cayes Fintech Co. Ltd (https://www.okx.com/), Coinbase Global, Inc. (https://www.coinbase.com/), Bitget Limited (https://www.bitget.com/), Payward, Inc. (https://www.kraken.com/), Gate Technology Ltd (https://www.gate.com/), Phoenixfin Limited (https://www.kucoin.com/):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Վերանայվում է թափոնների հաշվետվողականության բովանդակությունը՝ «օգտագործում» հասկացության փոխարեն հստակեցնելով նաև պահման և օգտահանման փուլերը: 2026 թվականից հաշվետվությունները պարտադիր կներկայացվեն բացառապես էլեկտրոնային եղանակով՝ «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակի» միջոցով, ինչը թույլ կտա պետական մարմիններին ունենալ անմիջական հասանելիություն տվյալներին: Լրացվում է նոր պատասխանատվության նորմ, որով սահմանվում են տուգանքներ թափոնների հաշվառման և գործածության կանոնների խախտման համար. անհատ ձեռնարկատերերի համար՝ նվազագույն աշխատավարձի 80-ապատիկի, իսկ իրավաբանական անձանց համար՝ 130-ապատիկի չափով, կրկնակի խախտման դեպքում՝ կրկնապատկված չափով:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Նախագիծը նախատեսում է սահմանել «ծնողական ժամ» եզրույթը՝ մինչև տասներկու տարեկան երեխա ունեցող աշխատողների համար և օրենսդրորեն ամրագրել ճկուն աշխատանքային գրաֆիկի կիրառման հնարավորությունը՝ աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնությամբ:

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Տրանսֆերային գնագոյացման գործող կարգավորումներում առկա են մի շարք դրույթներ, որոնց կիրառումը խնդրահարույց է գործնականում: Առաջարկվում է.
- տրանսֆերային գնագոյացման ստուգումները նախապես չպլանավորել, քանի որ տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումների վերլուծության արդյունքում հնարավոր է առաջանա կարիք տրանսֆերային գնագոյացման ստուգում սկսելու հարկ վճարողի մոտ, որը պլանավորված ցանկում չի եղել.
- օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված «հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր» սահմանման բ) կետի վերաբերյալ առաջարկվում է մշակել ՊԵԿ նախագահի հրաման, որտեղ հստակ կսահմանվեն նաև հարկման հատուկ ռեժիմներից օգտվող կազմակերպությունների կամ միավորումների հետ կապված առանձնահատկություններ:
- հստակեցվում է տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կիրառման շրջանակները մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար: Մասնավորապես, սահմանվել է, որ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի՝ մշտական հաստատությանը վերագրելի լինելու դեպքում կիրառելի կլինեն տրանսֆերային գնագոյացման կարգավորումները.
- նախատեսվել է նաև հարկ վճարողների կողմից վերահսկվող գործարքների մասին ծանուցման համար նախատեսված ժամկետի երկարաձգումը մինչև հուլիսի 30-ը ներառյալ.
- տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կիարռման և վերահսկվող գործարքների մասին ծանուցման պարտավորության առաջացման համար նախատեսվել է հարկային տարվա ընթացքում հանրագումարային 600 միլիոն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում.
- տրանսֆերային գնագոյացման փաստաթղթավորումը սահմանված ժամկետում չներկայացնելու համար առաջարկվում է պատասխանատվության միջոցի չափը նվազեցնել՝ սահմանելով 1 միլիոն, 3 միլիոն կամ 5 միլիոն ՀՀ դրամի չափով տուգանք՝ կախված վերահսկվող գործարքի իրականացման հաշվետու տարվա արդյունքներով համախառն եկամտի չափից:

«Որպես դրամական միջոցների գրավադրման եղանակով մաքսային վճարների, ներքին շուկայի պաշտպանության միջոցների, մաքսային մարմիններին վճարման ենթակա այլ հարկերի գծով մաքսային պարտավորությունների կատարման ապահովում, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ներմուծվող ապրանքների մասով որպես դրամական միջոցների գրավադրման եղանակով մաքսային պարտավորությունների կատարման ապահովում՝ կանխավճարների օգտագործման դեպքերն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)

- Ըստ առաջարկվող կարգավորման՝ հայտարարատուն կամ նրա լիազորված ներկայացուցիչը կարող է էլեկտրոնային համակարգի միջոցով դիմում ներկայացնել մաքսային մարմին՝ միասնական հաշվին առկա կանխավճարների գումարները որպես ապահովման միջոց կիրառելու համար: Կանխավճարները որպես ապահովում կարող են օգտագործվել, եթե հայտարարատուն չունի այլ չկատարված մաքսային պարտավորություններ, կամ եթե առկա մնացորդը բավարար է թե հին պարտքերի մարման, թե նոր ապահովման համար: